

9. ԱՐՄԵՆ ԻՇԽԱՆԻ ՀԵՔԻԱԹԸ

Թագավոր մի կեր, տասնըմեկ նազիր ուներ, մեկը պակաս էր. մեկէլ մեջերը լավ գործակատար մարդ չկեր։

Հ'ելան ընկան մե մարդ գտան, անունը Արմեն իշխան էր։

Արմեն իշխանին ուներ իրեք աղջիկ՝ մեկի անունը Ջանազան, մեկին՝ Ջարմանազան, մեկինը Հերիքնազան։

Կանչեցին Արմեն իշխանին բերին դրին նազիր։ Արմեն իշխանը համ իրա գործը կը կատարեր, համ թագավորի գործը կը կատարեր։

Տասվերկու տարի նազիրութեն էրեց, տասվերկու տարին օր թըմըմավ, ասեց թագավորին.

— Թագավոր ապրած կենա, հրաման տու էթամ իմ տուն. իրեք աղջիկ ունիմ, տեսնամ անհեր, անմեր ի՞մալ են էղած, թե ջոջըցած են՝ կարգեմ, ետ դառնամ դամ։

Թագավոր հրաման տվեց, Արմեն իշխանը հ'ելավ գնաց տուն։ Գնաց տուն, տեսավ իրեք աղջիկն էլ հասած են։

Վերուց թե.— Ջանազան, կարա՞ս էթա մե ավի միս բերես ուտեմ, տուն կտակ էնեմ քու գլխի վրա. մեկել էրկու աղջիկ կարգեմ։

Ջանազանը մե թվանք վերուց գնաց սար օր ավ էնա։ բերա հոր համար։

Հերը արաբի լղար հագավ, թուր վերուց ձեռ, հ'ետուց գնաց, մեջի մեջ աղջկա հ'առեջ կտրեց։

Ըսեց.— Շան որդի ավազակ, էս սարի ապուռ տարեր ես, էստեղ թալանութուն կէնիս։

Աղջիկն ասեց, թե.— Ես մե ծերունի հեր ունիմ, էկեր եմ ավի միս տանեմ։

Հերը թրի կալնով զարկեց աղչկա վզին, աղչկա խելք գնաց, ընկավ գետին։ Հերը ետ դարձավ էկավ տուն։

Աղջիկը ուշքի էկավ, տեսավ օր կեսօր հ'նցեր էր, ետ դարձավ էկավ տուն։

Հերը հարցուց ըսեց.— Աղջի՛, ավի միսը դո՞ր ա։

Ասեց.— Ափո՛, գացի սարը, սանճու էղա, չը կրցա օր ավի միս բերեինք քըզի։

Ասեց.— Ջարմանազա՛ն, դու գնա բե, տունը կըտակ էնեմ քու գլխու վրա։

Ջարմանազանն ըսեց.— Ափո, կէրթամ։

Լուսուն հ'ելավ, թվանքն առավ, գնաց։

Հերը արաբի լղաբ հագավ, թուրը վերուց, գնաց։ Գնաց սարի մեջտեղը աղչկա հ'առեջ կտրեց ըսեց.

— Շան որդի, դու էս սարի գնացող գալացող թալներ ես։

Աղջիկն ասեց.— Չէ՛, ես էկեր եմ, օր իմ հոր համար ավի միս տանեմ։

Հերը քաշեց թրի կալնով զարկեց վզին, աղջիկ խելք գնաց ընկավ։

Հերը ետ դարձավ էկավ։

Աղջիկ շուտ ետի խելքն էկավ գլուխ, ետ դարձավ, էկավ տուն, էլ չը կարցավ օր ավի միս բերեր։

Թե.— Որդի՛, քու ավի միս դո՞ր ա։

Ըսեց.— Գացի սար, քրդեր կախ ին քցաց, մարդ ըսպանին, չկարցա, ետ դարձա էկա։

Ասեց.— Հերիքնազա՛ն, դու կարա՞ս էրթաս, տունը կտակ էնեմ քու գլխի վրա։

Ըսեց.— Ափո՛, էս սրհաթ դու կտակ էրա իմ գլխի վրա, ես էթամ։

Հերը կտակ էրավ։ Մնաց լուս բացվավ, աղջիկը վերուց թվանքը գնաց։

Հերը արաբի լղաբ հաքավ, հ'ետևանց գնաց։ Մեջի մեջ աղչկա հ'առաջ կտրեց, ասեց.

— Շան որդի, գող-ավազակ, ես լսեր եմ դու բազրկյան կը թալնես։

Ասեց.— Ա՜յ ծերունի մարդ, ընձի լե քու պես ծերունի հեր կա, դու իմ թայ չես, քու ճանփեն գնա։

Հերը մե թրի կալնով ուզեց զարկել աղջկան, աղջիկ թվանքի զոնդախ քցեց դեմ, էրկու անգամ զարկեց, աղջիկը հա դեմն առավ, ձեռը չը վերուց թե՝ մենծ մարդ ա։ Մեկել օր հերը հ'ուզեց օր զարկե, թվանքի զոնդախով էնպես զարկեց հոր վզին, օր ուշաթափ էղավ, ընկավ։

Նստավ հորը վրեն լաց, լաց թե ընձի էլ էնպես ծերունի հեր կա, մեկ լե պըտի զարկա իմ հոր խելքը տանա։

Հեր մնաց պառկած, աղջիկ գնաց ավ զարկելու։

Հեր ուշ էկավ գլուխ, հ'ելավ գնաց տուն։ Աղջիկը գնաց, ավի միս զարկեց, քցեց թև, բերեց տուն։ Օր էկավ տուն, էրկու իրեք շիշ խորոված էրեց, բերեց տվեց հորը։

Ըսեց.— Աղջի՛, գացիր սար, քեղի բան դեմ չառա՞վ։

Ըսեց.— Ափո՛, քեղի պես ծերունի մարդ ռաստ էկավ ընձի։

— Ապա ի՞նչ արեց։

Թե.— Իրեք չորս հեղ զարկեց, ես ձեռք չը վերցի։ Թվանքի զոնդախով մեկ զարկեցի, մեռավ։ Նստա վրեն,— ըսավ,— շատ լացի։

Հերն ըսեց.—Չը կարցա՞ր մեկ էրկու անգամ ավելի զարկեիր թըվանքի զոնդախով։

Ըսեց.— Քեղի պես ծերունի մարդ էր, սիրտսի մոմռաց, ըսի, մեկ լե քեղի կը զարկա։

Ըսեց.— Հերիքնազա՛ն, կարա՞ս էրթիս թագավորի քով նազիր էղնիս, գործ կատարես։

Ըսեց.— Կէրթամ։

Աղջիկը հագավ ջհել տղի շոր, գնաց թագավորի դիվան, յոթն անգամ գլուխ հ'իջուց, ութնի վրա ձեռ կապեց, կայնավ։

Թագավորն ասեց.— Այ տղա, դու վի՞ր տղեն ես։

Ասեց.— Արմեն իշխանի տղեն եմ։

Ասեց.— Արմեն իշխանին իրեք աղջիկ կեր, տղա չըկեր։

Ասեց.— Էրկու աղջիկ են, ես տղա եմ։

Ասեց.— Ինչի՞ համար ես էկե։

— Էկեր եմ,— ըսեց,— իմ հոր գործ կատարելու։

Ասեց.— Կարա՞ս, քու հոր գործ կատարես։

Ասեց.—Թագավոր, հոր տղեն եմ, օր հոր գործ կատարեմ։

Ճանփեց ուր հոր տեղ նստավ, դիվան կատարա։ Էն թավուր դիվան կտրեց, օր ուր հորից լավ։

Էղավ օր մե ամիս էրկու մնաց. մեկ օր թագավորի աղջիկ էկավ դիվան, թագավորի աղջկա աչքն առավ Հերիքնազանին, մոր ըսեց.

— Ես կը մեռնիմ, պետք ա առնիմ Հերիքնազանին։

— Ա՜յ աղջիկ,— ըսեց,—մենք չենք կըրնա ըսե, թե մեր աղջիկը տանք ընդուր, ինքը պըտի հ'ուզե։

Թագավորի կնիկը դրեց ինքը իրեն սուտ հիվանդ։

Ըսեցին.—Ո՞րը պետք ա դեղ բերա։

Կանչեցին մեկ թուղթ իշկող մարդու, թագավորի կնիկ սորվեցուց, որ ըսե, թե Արմենի օրգի Հերիքնազանը պըտի յոթը կաթ անմահական ջուր բերա, թագավորի կնիկ խմա, սաղնա։

Թագավորը կանչեց Հերիքնազանին ասեց, թե.— Թագուհին հիվանդ է, պըտի էրթաս յոթը կաթ անմահական ջուր բերես։ Բերիր, բերիր, չը բերիր, գլուխդ կը կտրեմ։

Տղեն ըսեց.— Թագավոր ապրած մնա, որ կըսիս, կէրթամ։

Մե հատ թվանք վերցուց հետն ու ձին հեծավ։ Գնաց մեկ քաղաք, տեսավ, որ էտ քաղաք խանգարվեր էր, օշխար բերած են բեր, կնկտիք նստած են որ կթեն, աղջկներ օշխարի գլոխ բռնած են, հովիվ լե օշխար քշեր է, բերեր կիտեր է, հ'ըմմեն դարձած են քար։

Ետու գնաց քաղքի Բազարը, տեսավ ճոթ կը չափին. մե մարդ լե փողի քիսիկ հանիր, փարեն կուզեր տեր, հ'ըմմեն դարձած են քար։

Հեծավ ձին, խանչեց ուր աստված, քշեց գնաց։ Գնաց մեկ մեշի մեջ, լավ, լավ հավուզներ տեսավ, լավ պաղ աղբրներ, ըսեց.

— Ցավաջ, նստեմ էստեղ դինջանամ, ջուր խմեմ, հ'ելնեմ էրթամ։

Ջուրը խմեց, հ'ելավ ձին կապեց մե փոսի մեջ, ինք լե նստավ կուշտ հաց կուտեր։ Տեսավ որ իրեք ղուշ էկան, նստան էտ աղբրի գլխուն։ Լղաբ ուրանց հանին, էղան իրեք աղջիկ, մտան հավուզ լողկըցան։ Հերիքնազան հ'ելավ պզտի ղշու լղաբ գողցավ։ Լողկըցան հ'ելան, շորերը պետք ա հագնին, էղնին ղուշ։ Էրկուս հագան, էն մեկ մնաց։ Էնքան շուռ էկավ, չկարցավ լղաբ գտներ։

Իմաստուն էր, ըսեց.— Արմեն իշխանի որդի Հերիքնազան, իմ լղարս բե, տուր, էն քաղաքը որ խանգարվեր ա, պետք ա քեզնով լուսավորվի։

Հերիքնազան վերցուց, թե.— Քեզնե կուզեմ մե բուդիլկա անմահական ջուր։

Փարին վերցուց, թե.— Հերիքնազա՜ն, աստծուց խնդիր կէնեմ, թե տղա ես՝ դառնաս աղջիկ, աղջիկ ես՝ դառնաս տղա։

Հերիքնազանը էտ տեղ դարձավ տղա։

Փարին գնաց մե բուդիլկա անմահական ջուր բերեց, տվեց Հե-

րիքնազանին։ Հերիքնազան էտուր շապիկ տվեց, էտ անմահական ջուր վերցուց։ հեծավ ձին, առավ էկավ էն խանգարուկ քաղաքը, թագավորի դիվանի դռնովը գնաց. պետք ա անցներ, թագավոր կիսեն հետ քար էր, կիսեն հետ սաղ էր։

Ասեց.— Հերիքնազա՛ն, գլխիդ արևիդ մեռնիմ, ո՞րտեղից կիգաս։

Ըսեց.— Գացիր ենք թագավորի կնկա համար անմահական շուր կը բերինք։

Ասեց.— Կարելի՞ է էտ անմահական շրից մե քիչ լըլաս իմ բերանս, սաղնամ։

Մեկ ստաքան անմահական ջուր Հերիքնազանը լցեց թագավորի բերանը՝ թագավորը լուսավորավ, հ՚ելավ Հերիքնազանի թարք, ըսաց.

— Ընձի լե տար քու հետը։

Էկան կիսաճամփա։ Անդամ հրեշտակ էկավ, օր էտ թագավորին զարկեր վերևանց։ Հերիքնազան ձիուց իջավ, չոքավ օր անդամ հրեշտակին զարկե թվանքով։

Հրեշտակն ըսեց.

— Արմեն թագավորի օրդի Հերիքնազան, մի՛ զարկ ընձի, էտ քաղաքը օր խանգարեր եմ, կը լուսավորցում։

Հերիքնազան քաշեց իրեն թվանքը, հրեշտակն ըսեց.

— Երկնային լուս աստված, իմալ օր էտ քաղաքը խանգարվել ա, պետք ա լուսավորվի։

Աստծու հրամանքով քաղաքը լուսավորվավ, օչխրի բոբոցը հ՚ելավ, թագավորը հ՚ետ դարձուց Հերիքնազանին, էկավ ուր քաղաք, տեսավ օր իրա նազիրներ շալլաթ բերած ա, աշպազի գլուխ կը զարկին։

Թագավոր ձեն տվեց։ թե.

— Ինչի՞ հրմար աշպազի գլուխ կը զարկեք։

Ասին.— Կերակլներ դեղած ա, կանանչեր ա։ Աշպազները կուզին մեզի դեղին, էն հ՚ապով շալլաթ բերեր ինք, գլուխները պըտի զարնինք։

Թագավորն ըսեց.— Դուք էղեր եք քար, ես,— ըսեց,— կիսով չափ քար ի, կիսով չափ սաղ ի, ես գինամ էտի հին կերակուլ ա։

Էլ վնաս չտվին աշպազներում։

Նոր կերակլներ պատրաստեցին, բերին, թագավորն ու Հերիքնազան ու վազիրներ կերան։

Թագավորը հ՚ելավ, էրկու բեռ օսկի բաշխեց Հերիքնազանին։

Հերիքնաղան վերուց էկավ ուր թաղավորի քաղաք։

Բերեցին յոթը կաթ անմահական ջուր, լցին թագուհու բերանը։ Թագուհին սաղցավ, հ'ելավ նստավ։ Թագավոր լե խմեց՝ ջհելցավ։

Գացին, Արմեն իշխան աղջիկներ կարգեր էր, վերուցին բերին էտ տեղ։

Թագուհին վերցուց թե.

— Ի՞նչ տանք Հերիքնաղանին, օր մեզի էտենց լավութեն էրեց՝ հա՛մ թաղավորին ջհելցուց, հա՛մ էլ ընձի սաղցուց։

Ասին.— Աղջիկ տանք Հերիքնաղանին։

Բերին յոթը օր, յոթը գիշեր հարսանիք արին, պսակեցին։

Էնոնք հասան ուրանց մուրազին, գուք լե հասնիք ձեր մուրազին։